

Օգնե՛ք ինչ-որ մեկին խնայելու միջին չափով \$3.900 դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերի վրա

2009



Արդյո՞ք դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, որն օգնության կարիք ունի դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված ծախսերի հարցում:

Հիմա դուք կարող եք օգնել ինչ-որ մեկին, որի համար հոգ եք տանում՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի ծախսերով .Medicare-ի Հավելյալ օգնության համար դիմելու հարցում: .Medicare ունեցող ցանկացած ոք կարող է ստանալ դեղատոմսով բաց թողնվող դեղերի .Medicare-ի ծածկույթ: Հավելյալ օգնությունը մատչելի է սահմանափակ եկամուտով որոշ մարդկանց համար: Այն վճարելու է բոլոր ամսական ապահովագրավճարները և տարեկան չապահովագրվող նվազագույնները կամ դրանց մեծ մասը, նվազեցնելով իրենց պլանին վերաբերող դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված համավճարումները: Հավելյալ օգնության արժեքը տարեկան միջին չափով գնահատվում է \$3.900: Սահմանափակ եկամուտ և միջոցներ ունեցող բազում մարդիկ բավարարում են այս մեծ խնայողություններից օգտվելու պահանջներին, սակայն նույնիսկ չգիտեն դրա մասին: Ինչ-որ մեկի համապատասխանությունը որոշելու համար Սոցիալական ապահովությանը կպահանջվի իմանալ իրենց եկամուտը և իրենց խնայողությունների, ներդրումների և անշարժ գույքի (բացի տնից) արժեքը: Եթե նրանք ամուսնացած են և ապրում են իրենց ամուսնու (կնոջ) հետ, ապա մեզ պահանջվելու է տեղեկատվություն նրանց երկուսի մասին:

Հավելյալ օգնության համար պահանջներին բավարարելու համար նրանք պետք է ունենան.

- Անհատի համար՝ \$16.245-ով կամ միասին ապրող ամուսնացած զույգի համար՝ \$21.855-ով սահմանափակվող եկամուտ:
- Նույնիսկ եթե նրանց տարեկան եկամուտը ավելի բարձր է, այն մարդիկ, որոնց համար դուք հոգ եք տանում, կարող են որոշակի օգնություն ստանալ ամսական ապահովագրավճարների, տարեկան

չապահովագրվող նվազագույնների, դեղատոմսով բաց թողնվող դեղերի համար համավճարումների տեսքով: Որոշ օրինակները, որտեղ եկամուտը կարող է ավելի բարձր լինել, ընդգրկվում են, եթե նրանք կամ նրանց ամուսինը (կինը).

- Օգնում են ձեզ հետ ապրող ընտանիքի այլ անդամներին.
- Ունեն աշխատանքից առաջացող հասույթ կամ
- Ապրում են Ալասկայում կամ Հավայան կղզիներում և
- Անհատի համար՝ \$12.510-ով կամ միասին ապրող ամուսնացած զույգի համար՝ \$25.010-ով սահմանափակվող միջոցներ: Միջոցները են առնում այնպիսի բաներ, ինչպիսիք են բանկային հաշիվները, բաժնետոմսերը և բոնդերը: Մեր կողմից որպես միջոցներ հաշվի չեն առնվում իրենց տունը և մեքենան:

Ընթացք տարը

Սոցիալական պահովությունը կարող է ձեզ տալ դիմում-հայտարարագիր, որը դուք կարող եք լրացնել՝ .Medicare-ի նպաստառուներին Հավելյալ օգնության համար դիմելու հարցում օգնելու նպատակով: Հաջորդ էջում գետեղված աշխատանքային աղյուսակը կարող է ձեզ օգնել՝ Հավելյալ օգնության համար դիմելու հարցում իրենց օժանդակելու գործում: Աշխատանքային աղյուսակը դիմում-հայտարարագիր չէ:

- Խնդրե՛ք նրանց, ում օգնում եք, որպեսզի.
- Բացահայտեն իրենց միանձնյա, ամուսնու (կնոջ) կամ այլ անձի հետ համատեղ սեփականությունը հանդիսացող իրերը: Նրանք **չպետք է** ընդգրկեն իրենց տունը, տրանսպորտային միջոցները, գերեզմանատեղերը կամ անձնական սեփականությունը:
- Վերանայեն իրենց ամբողջ եկամուտը:
- Ժամանակ խնայելու նպատակով վաղօրոք հավաքեն իրենց հաշվառման փաստաթղթերը:

